Արձանագրություն N 3

«ԱՐՁՆԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

գ. Արզնի 17 օգոստոսի, 2021թ.

Ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Նադոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Հարությունյանը և Կ. Իսակովա
Հանձնաժողովի քարտուղար ՝ Մ. Մովսիսյան

## I. Ընտրված մասնակցին որոշման և հայտարարության մասին

(Զ. Նադոյան)

1.1 Սահմանված ժամկետում և սահմանված կարգով «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն և «ՄԵԹՇԻՆ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, ընկերությունների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «Բավարար»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.2 Հիմք ընդունելով «ԱՐՁՆԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/7» ծածկագրով ընթացակարգի արձանագրության N 2-ի 1.4.2–րդ կետը՝ հայտ ներկայացրած բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «ԱՐՁՆԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել ՝«ՄԵԹՇԻՆ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

## II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Զ. Նադոյան)

2. Հանձնաժողովը որոշեց.

ա) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հրապարակել տեղեկագրում:

գ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ն. Ջաղոյան)

4. «ԱՐՋՆԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի միջոցով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Արզնի, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6 համայնքապետարանի վարչական շենք N-1 հասցեում:

Հանձնաժողովի նախագահ՝

Ջաիլ Նաղոյան

Հանձնաժողովի
անդամներ՝

Նելլի Հարությունյան

Կլարա Իսակովա

Հանձնաժողովի քարտուղար ՝ Մարի Մովսիսյան